

ՅԻՆՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ¹⁾

(Վերջ)

թիւրքահայ ժողովրդի համակրութիւնը ռուսներին. Համակրութեան համար կրած պատիմների օրինակներ պատմութիւնից. Խոյագիդու 1877 թուկ հայերի աղէտն ու կոտորածը. Մի քանի խոյագիդուների աշբասագիրը. Ալաշկերտի և ոյլ տեղերի հայոց աղէտն ու կոտորածը. Անգիացի Նորմանը:

Վերջին դարում երեք անգամ է մղել Ռուսաստանը թիւրքիայի դէմ պատերազմ, 1828, 1853 և վերջապէս 1877 թուերին. Թէս այս պատերազմների գլխաւոր գործողութիւնները կատարուել են Բալկանեան թերակղզում, բայց սորան միշտ մասնակից է եղել Փոքր Ասիան, ուր պատերազմները տեղի ունենալով հայաբնակ նահանգներում, չեն մնացել առանց կորսատարեր հետևանքների այդ երկրի հայերի համար.

Երկու վերջին դարերի պատմութիւնից յայտնի է, որ ճընշուած նեղուած հայերը համակրութեան զգացմունք են ունեցել միշտ դէպի ռուսաց ազգն, իրու սահմանակից քրիստոնեայ պետութիւն և այդ զգացմունքը բազմաթիւ անգամ արտայատել են նոքա դէպիքը բերած միջոցին. Այս պատմական իրողութիւնը յայտնի է նոյն իսկ ռուսաց ազգին, որ քանից անգամ ականատես է եղել ասածիս և հասկանում է թէ ո՞րպիսի առաւելութիւն և դիւրութիւն է ստանում այն պատերազմը, որ շրջապատուած է համակրող ազգաբնակութեամբ:

Պատմութեան էջերը վկայում են, որ Փոքր Ասիայի հայաբնակ քաղաքների և գիւղերի հայերը, պարագուիլ ունենալով իւրեանց հոգևորականութիւնը, խաչ ու խաչվառով են հանդիպել առաջին երևացող ռուս զօրաբաժինը. Այս համակրութեան բուռն զգացմունքն այնքան է լացրել ցոյց անող հայերին, որոնք մոռացել են իսպառ որ նոքա դեռ ևս հպատակ են իւ-

1) Տես «Լումայ» № 4

բեանց օրինական պետութեան և որ ռուսաց երեալը դեռ ևս չէ ազատում նորանց յիշեալ հպատակութիւնից և կարծես համոզուած են եղել որ առանց գիւղական քահանայի պատառուած շուրջառի և ննոտի խաչվառի՝ ոռու յաղթական զօրքն անկարող է յառաջ խաղալ: Ասածիս ապացոյց են Բայազէթ և Արզրում քաղաքները, Ղըզը-Զախչալս և Բէնգիի Ահմադ գիւղերը և այլ ուրիշները:

Ամեն ոք հասկանում է այդ համակրութեան զգացմունքը: Մի բուռն ժողովուրդ, դարերի ընթացքում ընկճուած, ստրկացած մի պետութեան մէջ, ուր նորա կեանքն և զոյքը չունին ապահովութիւն, շատ բնական է, որ կհամակրի մի քրիստոնեայ սահմանակից պետութեան, որ իւր հողի վերայ պատսպարում պահպանում է նորա, հայ ժողովրդի, հաւատակից եղբայրներին:

Միթէ բնական չէ, որ թուրք իշխանութիւնը, զօրքը, և թուրք ու քիւրդ՝ ի բնէ անկարգութեան ենթարկուած, աւազակարարոյ՝ սանձարձակ ազգաբնակութիւնը, որ շատ տեղ դրացի կամ խառն լինելով հայերի հետ, իւր աչքով տեսնելով այդ համակրութեան ցոյցերը, վերագրէր նորանց բացարձակ հակակրութիւն դէսի թիւրք պետութիւնը և դէպք եղած մի-ջոցին՝ պատժէր այդպիսի ժողովրդին:

Ահա այս արձակ և որոշ ձեռով արտայայտած համակրութեան ցոյցը, կամենում եմ ասել, պատճառներից մինն է, որ իւրաքանչիւր Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ՝ Փոքր Ասիայի հայերն ենթարկուել են կրտորածի, կողովուտի և դաղթի:

Թէ ինչպէս է նայում մի պետութիւն իւր այնպիսի հը պատակների վերայ, որ պատերազմի միջոցում համակրութեան զգացմունք է յայտնում թշնամի պետութեանը, դորա անհերքի օրինակներն ունինք նոյն իսկ Ռուսաց պատերազմական պատմութեան մէջ: Բաւական համարելով այս նպատակի համար յառաջ բերել բազմաթիւ օրինակներից միայն մի քանիսը, յիշատակում ևմ նորանց այս տեղ:

1853 թուականի արևելեան պատերազմի միջոցին, երբ Խւրոպայի միացեալ պետութեանց զօրքերը պատրաստ էին դուրս դալ Սև ծովի Վրիմի ափերը, և լպատորիայի գաւառի թաթար ազգաբնակութիւնը յայտնում էր իւր համակրութիւնը դէսի թիւրքիան և իւրեանց համակրութիւնը նորա յայտնում էին ոչ թէ հայերի պէս արձակ-համարձակ՝ կրօնական ծէսով և հոգե-

որ երգեցողութեամբ, այլ այնքան դադտնի, այնպիսի խորագիտութեամբ, որ նոյն իսկ ծաւրիկեան նահանդասկետ դեներալ լէյտենանտ Պեստէլը ոչ միայն չէր նկառում, այլ և նորանց՝ իրեւ անխարդախ և հաւատարիմ հպատակներ, պաշտպանում էր բարձր իշխանութեան առաջ: Սակայն՝ երբ մի ոռու գիւղացի պատահմամբ տեսնելով այս գաղտնիքը՝ յայտնեց իշխանութեանը, վերջինս ոչ միայն իսկոյն և եթ լցրեց զօրքով Եւպատորիայի գաւառը և մանաւանդ երկու զիւղ, այլ և նախագծեց Ղրիմի ծովեղբեայ բոլոր մահմեղական թաթար ազգաբնակութիւնն ամբողջովին անյապաղ քշել ցրել ամենահեռաւոր նահանգների մէջ. սակայն իւր նախագիծը չկարողացաւ իշխանութիւնն ի կատար ածել լոկ այն պատճառով միայն, որ միացեալ թշնամի զօրքը շատ շուտ գրաւեց Եւպատորիայի գաւառը¹⁾:

1820 թուին, Կովկասի կուսակալ Նրմոլովի ժամանակ՝ Կազի-Ղումուկսի (Դաղստան) տէր՝ Սուրբսայ խանը հալածւում էր ոռու իշխանութիւնից Ռուսաց զանոգին իւր հաւատարմութեան խոստումը դրժելու համար: Հալածանքից ազատուելու նպատակով՝ Սուրբսայ խանը ձգելով իւր կալուածքը՝ Կազի-Ղումուկսը, գաղտնի կերպով կամեցաւ փախչել Պարսկաստան, նա իւր որդու և կնոջ հետ փոքրաթիւ թիկնապահներով և Աջարի լէգինների օգնութեամբ անցաւ Շաքի (Նորիսի) խանութեան երկրով: Հարկ եղաւ նորան գիշերել Ալմալու մահմեղական գիւղում, որ գրած, էր Շիրվանի (Շամախի) խանութեան սահմանում՝ Ալմալուեցիք չէին կամենում հիւրասիրել Սուրբսայ խանին, սակայն ուղեկից աջարցիների ստիպմամբ (և գուցէ ի պատիւ իւրեանց վերայ իշխող Շիրվանի Մուստաֆայ խանի, որ հալածուող Սուրբսայ խանի փեսան էր), հիւրասիրեցին փախստական խանին, նրբ Սուրբսայ խանը արդին անցել էր Կուր գետը և ոտքը դրել Պարսից հողի վերայ, Նրմոլովն անյատ լաղ լաելով խանի փախուստն ու Ալմալուեցւոց ընդունելու թիւնը, հրամայեց Նորիսու բերդապահին, որ սա իշխտ գաղտնաբար սովորեցնի Շաքի խանութեան թուրքերին այրել և ջնջել Ալմալու գիւղը, յափշտակել գոյք և իւրեանցը սեփականցնել գիւղը բնակինների կանանց և երեխանց:

¹⁾ Н. О. Дубровинъ «Исторія Кримской войны и обороны Севастополя» томъ I. стр. 280—285.

Արդարեւ՝ 1820 թուի օգոստոսի 1. բերդապահը ժողովեց 2000 միաւոր և հետևակ և նոյն գիշերը, նույնու ոստիկանապետ Մելիք Ասլան բէզի առաջնորդութեամբ ուղարկեց գաղտնաբար Ալմալուի վերայ, որ ունէր 200 տուն։ Այս խառնիճաղանձ դօրքը գաղտապողի մօտենալով գիշերուայ հանգստութիւնը վայելող գիւղին, այրեցին տները, սպանեցին շատ մարդիկ, 300,000 ռուբլի վնաս հասցրին, իրանք էլ կորցրին 25 մարդու կեանք և աւելի կլորցնէին, եթէ այս խաժամուժ հերոսներին թիկունքից չպաշտպանէին նույնուայ հայ ձիաւորները։ Ահա ձեզ անխոնեմ համակրութեան հետևանքը։¹⁾

Պատմագրող Պօտոտի աշխատութեանց մէջ կարելի է հաեդիսել բազմաթիւ օրինակներ համակրութեան և պատժի, սակայն այսքանս թող բաւական համարուի։

Դառնալով կրկին Փոքր Սսիայի հայ բնիկներին, ես ունիմ ձեռքս շատ աղէտների պատմութիւն թէ անձամբ ժողոված և թէ քաղուած անդիմացի նորմանի աշխատութիւնից, որ ինքն անձամբ սերկայ է եղել պատերազմի դաշտում՝ իբրև յատուկ թղթակից անդիմական Տիմես լրագրի։ Թէպէտ նորմանի տուած տեղեկութիւնները քաղում եմ «Ռյուսկայ Правда» Պետերբուրգի ուսու լրագրից, ուր բերուած է նոյնպէս քաղուածօրէն, սակայն այսքանս էլ, թէն չնչին, բաւական գաղափար կարող են տալ այն սոսկալի տանջանքներին, որին ենթարկուել է հայ աղգը պատերազմի ժամանակ, 1877 թուին։ Հապա ինչ սրտամմիկ աղէտների պատմութիւն կարելի՝ էլ ժողովել՝ եթէ մի ոք հայ՝ անձամբ և յատուկ դորա համար լինէր պատերազմի դաշտում, կամ առ նուազն՝ պտտէր հայ փախըստական գաղթականների մէջ։ Նա կաէր որ մինի կրած տառապանքը նման չէ միւսի, բոլորը կրել են աղէտներ, բայց տարբեր աղէտներ՝ և իւրաքանչիւրը գիտէ միայն իւր գլխին եկածը, ըստ որում թշուառութեանց արագահասութիւնը ժամանակ չի տուել մարդկանց խմբուել և միատեսակ աղէտ կրել, ամէն ոք աշխատել է միայն իւր և իւր գերդաստանի կեանքն աղատելու, շատ անդամ առանց իմանալու դրացուն հասցրած աղէտը։

Ամբողջ աշխարհին յայտնի է, որ 1877 թուի Յուլիս ամ.

¹⁾ В. Потто. «Кавказская война» томъ II. выюускъ II. 1888 г. стр. 295—297.

սում թիւրքաց զօրաբաժին և տասնեակ հաղար քիւրդ հրոսակ-ներ Շէյխ Զալալէդդինի, շէյխ Խրագուլահի և շէյխ Փէքեարի առաջնորդութեամբ, օգտուելով ոռւս պահապան զօրքի սակաւութիւնից հին Բայազիթում, յարձակուցին այդ քաղաքի վերայ, պաշարեցին նորան և սալսափելի կոտորած ու կողոպուտ գործեցին հայ բնակիչների վերայ. Ահա այդ աղէտի մի պատկերն է, որ ես լսել եմ անձամբ այդ բնակիչներից և որ այժմ տալիս եմ ընթերցողներին:

Երբ 1877 թուի Ապրիլին գեներալ Տէր Ղուկասովի զօրաբաժինն առաջին անգամ մօտեցել է Բայազէթ քաղաքին, վերջինիս հայ ժողովուրդը խուռն բազմութեամբ, պարագուլս ունենալով իւր հոդեորականութիւնը, խաչվառ ու խաչով դուրս է եկել ընդ առաջ հայ գեներալի: Նախ քան ոռւսների գալը տեղական թուրք հարուստ տարրն երկիւղ կրելով ոռւսներից, իւրեանց գոյքն՝ ապահովութեան համար յանձնել են դրացի հայերի հովանաւորութեանը: Հայերն ամենայն հաւատարմութեամբ վերադարձրել են տէրերին հոգեսլահուսառ, երբ թուրք տարրը համոզուել է, որ ոռւսները հեռու լինելով կողոպուտից, բերել են իւրեանց հետ միայն խաղաղութիւն:

Ի տրիտուր սորան թիւրք բնակիչները գաղտնի աւետելով հայերին, որ շուտով Վանի կողմից դարձ է Շէյխը, խորհուրդ էին տալի հայերին պահ տալ իւրեանց գոյքերը այդ թիւրքերին ապահովելու: Առ երես բարեկամ ձևանալով հայերին՝ թիւրքերը շէին մոռացել նորանց խաչ ու խաչվառով թափորը: Հայերը համոզուած էին որ թափորի պատճառով թիւրք բնակիչները լրաեսութեամբ հրաւիրել են քիւրդ հրոսակներին, որոնց յարձակումը թիւրքերը շատ առաջ և զաղտնի գուշակում էին և նորանցով էլ սպառնում էին հայերին:

Հայերն էլ քնած շէին, իւրեանց լսածն ապագայ վտանգի մասին ծածկաբար հասցնում էին քաղաքի կառավարիչ՝ Երևանի գաւառի Դաւալու գիւրի բնակիչ՝ Առաքելովի ականջին, որ վոխանակ լուրջ ուշադրութիւն դարձնելու սոսկալի վտանգին և իշխանութեանը տեղեկութիւն հասցնելու, անվայել յիշոցներով հեռացնում էր իւրեանից լրատու հայերին:

Վարդովեցուցիչ լուրելն երբ աւելի և աւելի են թանձրանում, հայերը փակիչ են շուկայում իւրեանց խանութները, որպէսզի չենթարկուին կողոպուտի և յափշտակութեան: Կառավարիչ Առաքելովը հրամայում է բանալ անպայման: Հայերը

ինդրում են թոյլտւութիւն ժամանակաւորապէս տեղափոխուեցու դէպի Երևանի նահանգը, իսկ պարոն Առաքելովը Շնորի ու հաւատու հայնոյելով վոնդում է հայերին. (Երևանի նահանգում իւր նշանաւոր հայնոյանքներով յայտնի է պ. Առաքելովը): Հայերը վերջապէս խնդրում աղերսում են, որ թոյլատըն գոնէ գերդաստաններն ուղարկելու: Այս խնդիրն անգամ մնում է առանց հետեւանքի:

Մինչ այս մինչ այն, յանկարծ լսում է, որ Շէյխի օրդուն արդէն մօտեցել է և ամ՞ն մի փախուստ անհնար էր և անկարելի: Ուուս կազակները ամբողջովին սպանւում են՝ թէն անձնատուր եղած, իսկ հետեւակ զօրքը պատսպարւում է միջնաբերդում, ուր պատսպարւում է և կառավարիչ Առաքելովը թողնելով յուսահատու հայ ժողովրդին թուրք բնակիչների և քիւրդ հրոսակների արիւնաթաթախ ձեռքերում: Այդ եղել է Յուլիսի սկզբում (Կարծեօք ծ-ին):

Քրդերի ասպատակութեան առաջին օրը մարդկանցից հեռացած, Աստուծուց մոռացուած, բաղդից դէն ձգուած հայերը սոսկալի յուսահատութեան մէջ դիմել են ոմանք այս և ոմանք այն թիւրք հարևանի մարդասէր հռվանաւորութեանը, բայց այդ մարդասէր հսկանաւորութիւնը տարել է նորանց կորատեան անդունդը:

Սօկար Ստեփիանը, Աթոն, սորա որդի Գէվոն, Նալլանդ-Օհանը, Վոշիկ Խաչոն, սորա որդի Հայրոն, Առաքել Մակարեանը, Բաննահ Խաչոն, սորա որդի Վարդանն ու . Ստեփիանը և եղբայր Մկրտիչը իւրեանց ընտանիքով և գոյքով պատսպարուել են Բաշհաւուշ Ալի աղայի տանը, յոյս դնելով նորա վաղեմի բարեկամութեան և մարդկանիրութեան վերայ: Բայց աղայի որդի Բարան դաւաճանութեամբ բերել է քրդերին, որոնք կողոպտելով պատսպարուած հայերին, հանելով նորանց հանդերձը, մերկացրել են տղամարդոց, կապել են միմեանց ձեռքերը և տնից դուրս են բերել իրեն թէ Շէյխի Օրդուն տանելու:

Կարճ միջոցից յետոյ նորանց կանանց դուրս են բերում տան բագը և այն տեղ այդ թշուառ և յուսարեկ կանանց ցոյց են տուի քրդերը մի զարհուրելի տեսարան: Բոլոր տղամարդիկ սպանուած էին և նորանց կրծքից հանած թոքերը շարեշար կախուած էին: Հայերն իւրեանց կեանքը կնքում են այդ տեղ և նորանց գոյքը մնացել է մարդասէր և բարեգութ ՀՈՒՄԸՑ

Բաշհաւուշ Ալի աղային:

Գունդ Օհանի որդիք ահից փախչում են քաղաքից դուրս և նորանց մայր Ուստիանը, գնդակից ուսպումը վէրք ստանալով, չէ կարողացել փախչեր Սրկու օրից յետոյ որդիքը վերադարձել են մօրը տանելու, բայց տեսել են որ նա իւր տանն արդէն մեռած է և երկու ստինքները կտրած են:

Թաղէսս Մովսէսեանը իւր ընտանիքով և դրացի երեք գերդաստաններով իւրեանց դուքով, արժուութեամբ մօտ 5000 ռուբլի, պատսպարուել են վաղեմի բարեկամ և եղբայրակից Թամօ Աւետ օղլու տանը, որ երկու օր պահելուց յետոյ իւրում է նորանց դուքը և իւրեանց դուրս վոնդում տանից: Թշուառ, անտիրական հայերը դուրս են զալի փողոց և թշնամու գնդակից փախչելով՝ հինգ մարդ նորանցից մտնում են ցամաքած առուի կամարի մութը խորքերը և այստեղ մնում են հինգ օր ծարաւ, քաղցած: Միւսները փախչում են դէս ու դէն: Թաղէսսի ծերունի հայր Մովսէսն անյայտ և անդարձ կորաւ: Թաղէսսն էլ իւր ընտանիքով փախչում է դէպի Շերիֆ էֆէնդու տունը, որ քաղաքի իշխաններից մինն էր և մէջլիսի անդամ: Բայց պատէպատ փախչելու ժամանակ՝ Զալիլ բէգի կինը, որ իւր տանը շնորում կանզնած է եղել, կանչել է թագնուած քրդերին՝ ցոյց տալով թէ սոքա բրդեր չեն, թէ և ծածկել են գլուխներին սպիտակ չալմա, այլ հայեր են: Քրդերն իսկոյն կողոպտել են կանանց և գնդակով սպանել են Աթօին, որ իւր եղբօր մանկահաս աղջկանը գրկում սեղմած փախչում էր: Պընդակն աղջկայ ոտը ծակելով՝ անցել է Աթօի կրծքից: Աթօն իսկոյն մեռնում է, իսկ վերաւորուած մանուկը մեռել է Մակու խանութեան երկրում, ուր փախցրել էին երեխային:

Ցուսաբեկ հայերը, բացի իւրեանց յոյսը թիւրք աղաների վերայ դնելը, դիմել են մի այլ խորամանկութեան. նորաքեւդ ձևանալու համար և քրդերից ազատուելու նպատակով՝ գլուխները ծածկել են սպիտակ չալմա¹⁾: Սակայն փրկութեան այս չալման շատ անգամ կորստեան էր մատնում կը դիմեն, որովհետեւ միջնաբերդից ուսւ զինուորների տեղացող գընդակները գլխաւորապէս ուղղում էին չալմայ կրողների վերայ,

¹⁾ Սպիտակ չալման կրում են միայն քրդերն, իսկ հայերը նշյն չալման փաթաթում են սկ թաշկինակով և մի ծայրը կախում աջ ականչի վերայ:

Քրրե յարձակուող քիւրդերի վերայ: Առանց սպիտակ չալմայի՝ քիւրդն էր սպանում, ուր դիմէին անտէր հայերը: Նաւասարդի որդի Խաչոն, սպիտակ չալման ծածկած, իւր երեխայի ձեռքը բռնած անցնելիս է եղիլ քերդի տակով: Որուս զինուորն ընդունելով նորան քիւրդի տեղ՝ գնդակով սպանել է նորան, թողնելով մանկանը իւր հօր անշնչացած մարմնի վերայ լալով նայելիս...

Որովհետեւ որուս զինուորները ցերեկով քերդից անդադար գնդակներ են արձակելիս եղել քաղաքի վերայ, այդ պատճառով քիւրդ հրոսակների կատաղութիւնն ու շարժումն աւելի առստականում էին գիշերները:

Նորկային շատ հայ ընտանիք իւրեան գոյքերով պատսպարտուել են Շերիֆ էֆէնդու տանը, յոյս դնելով նորա գթասրատութեան վերայ: Նորանց սիրան ահ ու դողի մէջ էր և բոլորի հեկեկանքը միացել էին: Շերիֆ էֆէնդին, այդ երեկոյին, իւր որդիների հետ միասին գնացել էր Շէյխի մօտ իրրե գութիւնդելու նորանից հայերի համար. հայերը գոնէ մեծ յոյս են ունեցել այդ նենդ մարդու վերայ: Հոգեմաշ ըոպէներն անցնում էին խիստ դանդաղ: Յանկարծ լսուել է, որ Շերիֆ էֆէնդին վերադարձել է: Բոլորի ահաբեկ դէմքի վերայ յուսոյ նշոյլ է փայլել:

Բայց փոխանակ Շէրիֆի գալիս են Շէյխի քրդերը, բերելով իւրեանց հետ հօ ձի, որոնց վերայ բառնում են Շէրիֆին ապահնած: Հայերի գոյքը և ամբողջ գիշեր կընել են Օրդու: Հայերը համոզուել են որ այդ նենդաւոր կեղտու թիւրը էֆէնդին մատնել է իւրեան ապահնած հայերին, որպէս զի նորանց գոյքի մի մասը մտնի նորա անյագ որկորը: Այդ տեղ անդուկներն ու արկղներն անխնայ կոտրատում են և միջի իրեղէնները տանում: Անձարացած հայերն այլ ևս չեն մտածում քըտինքով աշխատած ունեցածի վերայ՝ նորանք սրտատրով մտածում են միայն իւրեանց կիանքի վերայ՝ տեսնելով տան աիրոջ նենդութիւնը:

Այդ միջոցին պատսպարուած հայերը մտնում են միւս աենեակներն և դռները ներսից կողպում են: Գոյքը կրելուց յետոյ՝ գեռ արշալոյսը չբացուած՝ քրդերը ծակում են սենեակների առաստաղը, որից մտնելով ներս կողոպտում են բոլոր կանանց ու տղամարդկանց:

Ապա հրամայել են նորանց դուրս գալ բագը և ընդունել

Նէյխի թողութիւնը կանանց և տղամարդկանց կանգնեցրել են միմեանցից ջոկ: Զալէդղին փոքր շէյխը կանգնած, բռնում է իւր թուրք, որի տակով հայերը մէկ մէկ անցնում են, իրեն հնազանդութեան նշան: Հանդէսը կատարելուց յետոյ՝ Զալէդղին շէյխը թունելով հայերին իւր քրդերի ձեռքում, ինքն առնում է հետը Նէրիփ էֆէնդու գերդաստանը և դնում է Օրդու մեծ շէյխի մօտ:

Կողոպտուած հայերը քրդերի ձեռքից փախչելով մտեր են մի դատարկ վարժատուն: Արդէն ցերեկ էր Այս տեղից փախչելով՝ պատսպարուել են Ղազարի դատարկ տանը. Այստեղ զարգար Սիմոնը անզգուշաբար բանում է դուռը նայելու, յանկարծ թշնամու գնդակը գլորում է նորան գետնի վերայ Որդին ընկնում է հօր մարմնի վերայ՝ արտասուզ թափելու, սորան ևս անշնչացնում են իսկոյն: Պատանի քոյրը սփուռում է եղքօր մարմնի վերայ, սորան ևս գնդակով մահացնում են: Արկու բոպէում երեք մարմին գլորում են իրար վերայ:

Սարսափահար հայերն, այս տեսարանից ցնցուած, տեսնելով որ այստեղ այլ ևս պատսպարուել կամ դռնով դուրս փախչել անհնարին է, ծակում են տան յետնի պատն և այնաշեղից դուրս փաղելով՝ խառնիշվոթ փախչում են դէպի Սարդիս աղայի այգին: Բայց քրդերն այստեղ ևս նորանց յետնից հասնելով սպանում են Դաւունց Առաքելին, իսկ միւսներին կողոպտում են. Այդ բոպէին պատահում է թիւրք կանոնաւոր գինուրբների մի խումբ, որ այդ հալածուող հայերին իւրեանց պաշտպանութեան տակ առնելով՝ անինաս բերում են զիսաւոր շէյխի մօտ, որ յանձննեմ է նորանց մի քրդի պահպանութեան: Տէր Ղուկասովի երկրորդ գալու ժամանակ բերդապահ զօրքն աղատելու համար՝ այդ թշուառ հայերը միջոց են գտել փախչելու դէպի Պարսկաստան՝ սահմանակից Մակուի խանութիւնը: Այսպէս է եղել Ներիփ էֆինդու բարեկամութիւնը:

Գտան գերդաստան ապաւինելով Ահմադ աղայի վերայ՝ պատսպարում են նորա տանը: Ահմադ աղայի հարսն առնում է հայ կանանցից սոսկեղէն զարդերն, իրեն քրդերից աղատելու համար. Քրդերն իւրեանց մօլայի հետ գալիս են կողոպտելու սորանց, գուցէ և սպանելու: Հայերը ճարահատեալ խորամանկութեամբ յանձնառու են լինում մահմեդականութիւն ընդունելու: Հաւատափիսութեան վերայ ուրախացած՝ քրդերը ծակում են տան ետեի պատը և հայերին դուրս բերում յետնից,

ըստ որում տան առաջը միջնաբերդի դէմ լինելով՝ ոռւս զինուորները գնդակահար կանէին նորանց։ Հայերին առանց կողոպտելու, երկու դրօշակով, երգելով տանում են Օրդու զլխաւոր չէյիսի առաջ։ Օրդու գնալուց առաջ հայ կանաքը խնդրում են Ահմադ աղայի հարսին վերադարձնել իւրեանց զարդերը, բայց նա բաց է ասում։ Օրդուի մէջ մնալուց մի քանի օր յետոյ առերես մահմեգականացած հայերը փախչում են Մակու։

Հաւատացնում էին ինձ փախստական գտղթականներն, որ մինչև Տէր-Ղուկասովի երկրորդ գալուստը Բայազէթի վերայ, հայ սպանուածների թիւը հասնում էր աւելի քան 820 հոգու, իսկ նորմանը, ինչպէս յետոյ կտեսնենք, կոտորածների թիւը որոշում է 2,400 հոգի։

Այսպէս էին նկարագրում Բայազիթու հայ փախստականները, որոնցից 66 հոգի կանաքը, երեխայք և տղամարդեկա Մակուց եկել էին Շարուր, 1-77 թուականի Սեպտեմբերի 19-ին և անցնում էին դէպի Երևան Նորամերկ էին և քաղցած փարով, յուսահատ և ուժասպառ, Շարուրում՝ Բաշնորաշէն գիւղում, ուր այդ ժամանակ կալի և ես, մի քանի հայ ծառայողներ, մօտակայ Ուկիա-Նորաշէն հայ գիւղի բնակիչների միահամուռ օգնութեամբ, կերակրեցին այդ թշուառներին, որի ժամանակ հաղիւ թէ կարողացայ ես ստանալ վերսիշեալ տեղեկութիւնները, ըստ որում ուտելուց յետոյ նոքա շարունակեցին իւրեանց ճանապարհը դէպի նրեան։

Կրկնում եմ, որ եթէ մի ոք պտտուող լինէր փախստական գաղթականների մէջ, նա անթիւ պտտմութիւններ կարող էր ձեռք բերել, մանաւանդ Ալաշկերտի փախստականներից, ուր կատարուել են սոսկալի կոտորածներ Տէր Ղուկասովի դարձի ժամանակ, ինչպէս ականատես է եղել անգլիացի նորմանը։

Բայազիթու վերոգրեալ անցքերի ճշտութիւնը հաւաստիացնում է ոչ միայն նորմանը, այլ և մի աղերսագիր Բայազիթու 18 գաղթականների կողմից, 1877 թուի օգոստոսի 2-ին Կովկասեան Օգոստ. Փոխարքային մատուցած, որի պատճէնը հարկ եմ համարում դնել այստեղ։

«Նորին Բարձրութեան մեծի փոխսրքայի կայսերն ամենայն Ռուսաց խոնարհաբար խնդիր և ակնածական յայտարարութիւն»

Ի դիմաց գաղթական ժողովրդոց հին Պայազիտու

Արտասուաց արժանի թշուառ և տիսուր վիճակի ենթար-
կուած տառապակիր Հայ-քրիստոնեայ բնակիչք հին Պայազիտ-
թաղաքի և իւրոց շրջակայից, երբ 1877 ներկայ թուականիտ
Ռուսիոյ բարձրափառ և խաղաղասէը կայսերութեան արդի
աշխարհակալութեամբը, նորին բարեխնամ կառավարութեան
հովանաւորութեան ներքոյ խաղաղութիւն և անդորրութիւն
կը վայելէր, յանկարծ հարաւային սաստկաշունչ փոթորիկ մը,
այն է Օսմանցի զօրաց դրացի տաճկաց և քիւրդերու դժն-
դակ յարձակումը, այնպէս վրդովիեց մեզ, որ հիմայ ալեկոծ ծո-
վու խոռովայոյզ մտկերսութիւն վրայ՝ տատանող բեկեալ նաւու մը
երեսոյթը կը կրէ. հին Պայազիտու և իւր շրջակայ հայ գիւղերու
քրիստոնեայ հասարակութիւնը, ամենքն ալ մերկ և կիսակեն-
դան, ամենքն ալ փառազուրկ և չքաւոր, ամենքն ալ կողոպ-
տուած և կեղեքուած առօրեայ ողեղաճիկ պարէնին կարօտ,
տաճկական արեան ծարաւի անդութ սրովը և դառն հալածա-
նօք՝ մայրերը որուեկորոյս, որդիքը մայրազորկ եղած, ստոնդեաց
նորածին մատաղ մանուկները խանձարոյ մէջ հրապարակնե-
րուն վրայ աղիոնորմ մորմաքներով թաւագլոր խաղացին մարց գըր-
կէն և գրգանքէն զուրկ. և վայ, ինչպէս այս մատաղ գառները պի-
տի սնուէին իցէ թէ ծնողաց գիրկն ալ ինէին, քանի որ տաճ-
կաց անազորոյն սուսերը նոցա սննդեան գործարաններն, մարց
ծիծերն, անգամ արմատախիլ ըրած էր, հայոց տուները հայոց
համար զոհարան դարձած էր և նրազիքիստոնեաններ արդեօք
իրենց արեան մէջ լողացին, որոնց ճիշտ թիւը այժմու անծա-
նօթ է. երկինքն անգամ ողբաց այս սոսկալի տեսարանին վե-
րայ, որուն համառօտ և տիսուր նկարագրութիւնը ահա ար-
տօրալից աշօք և կսկծալի սրախ և ողորմագին դիմօք գերա-
փառ մեծախնամ կայսեր և նորին փոխարքայիդ վսեմափայ-
լութեան առաջի կը ներկայացնեմք, գթութիւն, խնամք, շնորհք
և պաշտպանութիւն հայցելով:

Սոյն այս 1877-րդ թուականի նախընթաց ապրիլ ամսոյն
մէջները, երբ Ռուսիոյ կայսերական գօրը. Կարնոյ նահանջին
սահմանը պիտի կոխէր, Պայազիտի բնիկ տաճիկները քարձրա-
փառ կայսերը խաղաղասէր դիտաւորութիւնը հակառակ
երկիւղով մը պատեալ իւրաքանչիւր տաճիկ իր ինչը և
ստացուածքը ու հարստութիւնն առած՝ Հայ դրացոյն տունե-
րը ապաստանեցան, Ո՞հ, զարմանօք դիտեց մեր դրացի տաճկու-
թիւնը Ռուսիոյ արշաւանքը, որ իւր քայլերուն հետ խաղաղու-
թիւն և ապահովութիւն կը բերէր մն իցէ (ազգէ) եղող հա-
սարակաց, և տեսաւ որ՝ ոչ Ռուսիոյ զօրքը աւերման նպատա-
կաւ սոհման կոխեց և ոչ իր դրացի հայը իր մէկ մազին վնաս
տուաւ թէ խորհրդով և թէ գործով այլ առաջինէն աւելի
մարդասիրական ցոյցերով ընթացաւ տաճկաց հետ, ինչպէս որ
սոյն այս բարենպատակ ընթացքը և խաղաղական ցոյցերը կը

հրատարակէր Վասեմ, փոխարքայիդ առ Կարնոյնահանգի հայասեռ և տաճկասեռ բնակիչսն ուղղած բարձր շըջարերականը։ Ինչ և իցէ ապրիլը լրացաւ, մայիսն ալ անցաւ, բայց երբ մայիսին յաջորդեց յունիս ամսոյն հինգերորդ օրը տիմուր և սպալի օրը, մեր դրացի նենգամիտ տաճկաց գրդուանօքը և ջերմ աջակցութեամբը շըջապատեց մեզ Օսմանեան զօրքը խառն մեր սահմանի քուրդերու բազմութեանը և տաճիկ դրացեաց հետ, մոլեռանդ և մոլեգին շէլիսերու առաջնորդութեամբ. աստանօրմեր տաճիկ դրացիները մեզ իրենց տունները հրաւիրեցին, երբ ապահով պահուելու մօտալուտ վտանգէն, իւրաքանչիւր հայընտանի իր բոլոր գոյքովը և հարստութիւնով տաճկաց տունները մտան, կամ լաւ ևս է ասել բանտարկուեցան, ոմանք ևս իրենց տունները մնալով, երբ օսմանցի զօրաց և քուրդերու արիւնառուշտ մարդկեղէն գաղանաց. լէզէօնը հայոց անքանակ տունները հնատագոտելով՝ հայ տըհւն ծծելու ծարաւ կը յայտնէր, երկու օր ծրարեց զմեզ դրացի տաճկութիւնը, երրորդ օրը գաղտնի նենգութեան շշունջը յերևսն հանելով մեզ իրենց տուններէն դուրս արտաքսեցին, գրաւելով մեզ բոլոր գոյքը և հարստութիւնը և զօրաց ու քուրդերու աւարտառութեանը մատնելով. Աստ էլ տեսանել իշխան և հոսարակ, արուեստաւոր և մշակ, մի օրինակ վիճակի վիճակեալ աղքատ և չքաւոր մերկ և բոկոտն օսմանցիներու և քուրդ աշխրաթի անգութ ճիրաններուն մատնուած, Հայ արանց, կանանց, երիտասարդաց, մանկամարդ օրիսրդաց և մատաղ մանկանց ճիշը, աղաղակը և լալիւնը աղիք կը գալարէր, երկինք կը գրաւէր, ուր փախչէր Հայն այսունետե, ուր էր իր ապաստանարանը, ոչ լեռները և ոչ բուրները կարտացին ծածկել և ապահովել հայու կեանքը անօրէն դրացիներնուու և օսմանցի զօրաց սուրը զոմանս դիտաւալ գւտինը կը փուէր, զոմանս կարեէր կիսոցոտէր և զոմանս կը ստիպէր անյապաղ մուհամմետեան դաւանութիւնը էշէար յեղյեղել քրիստոնէական կրօնի անսուտ նշարտութիւնը ուրանալ և զայն ապացուցանել գլխու ճերմակ փաթոյթով մր: Այս շփոթութեան մէջ հայու խանձարապատ մանուկը աղքարկույններէն քիւրդերը կը գերէին և օսմանցի զօրքը դեռարուսիկ խարտեազ հայ մանկիկը գլխու մազերէն բռնած սրախողիսոր միջակտուր կընէին. անտէրունչ կնիկները աստանդական կթափառէին էրիկները գտնելու և էրիկները իրենց կիները, մայրը կորուսեալ զաւակը և զաւակը իր մայրը, որոնց շատը ցայժմ դեռ անծանօթ. ինչ ըսեմ և Աստուծոյ սուրբ տաճարներուն համար որուն սեմէն պիղծ ոտքեր մուտ զործեցին, որուն սրբութիւնը աւերեցին և պղծեցին, որուն սրբասէր սեղանը ապականեցին և սուրբ բեմին փառազարդութիւնը կապտեցին, քրիստոսեան խաչին նշանը ծաղը ըրին և պաշտելի աւետարանին նուիրական թերթերը կտոր-կտոր, նոյնպէս և սուրբ եկեղեցւոյ խորհրդանիշերը. արդեօք և եկեղեցեաց ծոցը ծրարուած սրբոց մասունքները անսուրբ և աննուէր ձեռ-

քերու մատնուեցան, թողում ասել և այն մեծ հրդեհը, որ շատ
մը հոյակատ շէնքեր այրեց մոխիր դարձուց և Պայազիտ քա-
ղաքը յափտենական աւերակաց ողբալի անշըռութեան մատնեց
Վերջապէս Պայազիտի քրիստոնեայ ժողովրդեան մնա-
ցորդը նախ օսմանցով բանակատեղին ըռնի գերի վարեալ ան-
տի անօրէններու սրածութենէն և գերեվարութենէն հազիւ
հազ մազապուր, յակամայից փախչող փախչողի ետև պարսկա-
կան իշխանութեան ներքն Քեշմիշթափէ և Մակու ըսուած տե-
ղերը ապաստանեցաւ, որ մեծ կարեկցութեամբ ընդունվեցան
քրիստոնեայ ընակիչներէն. այն և մեծ համակրութեամբ մ'ալ
սոյն դաղթական գերեաց խումբը, այժմ ի Մակու. գտնուող
Ռուսաց հպատակ Շուշուեցի Դաւրիթաբնակ Յունանեանց Սար-
գիս աղայ անուն բարեպաշտ և ազնուաբարոյ անձի մը անխոնջ
ջանիւքը կերակրուեցաւ Մակուայ գերապատիւ խաներու շնոր-
հիւը տասն տասնհինգ աւուր չափ. նա մանաւանդ մեծ գո-
հութեամբ կյիշենք նաև Պարսից Վսեմափայլ Շահին կողմէն
գերեաց եղեալ միամսեայ միջոցի բաւականացնող հայցի շնորհ-
քը, բայց այսուհետեւ ինչ պիտի ըլլան այս գերիները, սովամահ
պիտի կրանին անշուշտ մերկ բացօթեայ և անծածկոյթ ըլլալով
ցրտահար պիտի մահանան, թէ որ փրկարար ձևոք մը զանոնք
չպատսպարէ:

Վասն որյոյ այս վշտանար թշուառ ժողովութեամբ ինքզինքը
Ռուսիոյ բարեխնամ Կայսեր և որին վեհափառ Վսեմ. փո-
խարքայիդ միաթարիչ և սփոփարար հովանաւորութեանը յանձ.
նելով խոնարին հոդույ աղերսիւ գթութիւնը կը հայցէ, խնամք
կը հայցէ, ճար և ճարակ կը ինդրէ, մնարով մտերիմ հպատակ
Խուսիոյ կայսերական մեծափառութեան և խոնարին ծառայ ձե-
րում վսեմափայլութեան—ընակիչը հին Պայազիտու և իւրոյ
շղակայից:

Ն. Տէր-Ստեփան քահ. Մելքոնեան Յոկիաննէս Տէր Արրահամով
մ. Մկրտիչ Մարտիրոսեան Ըրբամով Մարգարայ Դանէլով
Նորընճայ Սեղը. Տէր-Սեղբակեան Սիրական Դանիէլով
Ղազար Յովհաննիսեան Մովսէս Տէր-Պետրոսով
Օհանով Դրմբեան Վարդան Իրմբեան
Հայրապետ Դրիգորով Մանուկ Ղազարեան
Ցովհաննէս Մկրտիչով մ. Ներսէս Ասլանով
Խ. ծ. Սարգիս Մանուկեան Արագպետ Տէր Դանիէլով
Խաչատուր Մկրտիչով

Այս աղերսից յետոյ ես դիմում եմ անզիխական աղբիւրին:
Բայազիդու կոտորածի մասին նորմանը լիշտակում է այսպէս.
Եթայազիտում քիւրդերի ձեռքով գործած կոտորածի մա-
սին ես կարող եմ հաղորդել հետեւալ լիովին ճշգրիտ մանրա-
մասնութիւնները. Ֆայիք փաշի և Բայազիտու բերդապահ
ուուս զօրաբաժինների մէջ եղած պատերազմից յետոյ, Թէփե-

ըիսքէօյի մօտ, Յունիսի 13-ին (1-ին), ուուս զօրաբաժինը, շրջապատուելով թշնամու առաւել զերազանց ուժերով, հարկադրուեց քաշուել միջնաբերդը։ Հետևակ զօրքը յաջողութեամբ հասաւ տեղի։ Ինչ կվերաբերի ձիաւոր զօրաբաժնին, սա շրջապատուեց մօտ 6000 քիւրդերով շէյխ Զալլալէդդինի առաջնորդութեամբ և անյապաղ զինաթափ եղաւ։ Աս անյարմար եմ համարում մանրամասնութիւնների մէջ մտնել այս զօրաբաժնի վիճակի մասին։ Զինաթափ եղած կազակներին մտհացնելով, քիւրդերը, փանատիկով շէյխ Զալլալէդդինի, շէյխ Օբէյդուլլահի ու շէյխ Փէքարի, այլ և Փահիմ էֆէնլու, Մահամմադ բէզի, Թափէր բէզի և այլոց առաջնորդութեամբ մտան Բայազէթ։

«Ենունեստե յառաջ եկաւ մի անասելի սարսափահար առարան։ Քաղաքում մնացել էին դեռ ևս 165 քրիստոնեայ գերդաստուն։ Նոքա ենթարկուեցին կոտորածի և քիւրդերը շէին խնայում ոչ կանանց և ոչ մտնկանց։ Թիւրք սպան, որ մի քանի օր յետոյ այցելել էր քաղաքը, հաղորդում է, որ նա չէ գտել այն տեղ ոչ մի բնակիչ մուսուլմաններից։ Բոլորեցեանք մինչև վերջինը փախել էին այն գարշահոտութիւնից, որ տարածում էր 2,400 դիակներից։ Ամեն մի տան մէջ, ուր յաել էր սպայն, տեսել էր սպանուած քրիստոնեանների խմբեր, որոնց վրդութեցուցիչ կերպով այլանդակած մարմինները դարսուած էին զգուելի և անվայել դիրքերով։»

«Ես կոտորածի մասին լսելով Մուխտար փաշան անմիջապէս հրամալեց զինաթափ անել և ցրել քիւրդերին և հրացանի բռնել նորանց առաջնորդներին։ Այս հրամանի առաջին բաժինը բոլորովին աւելորդ երևաց, որովհետեւ իսլամի այս անկանոն պաշտպանները, դէն ձդելով զէնքերն, իւրեանք էին փախչում մեծամեծ խմբերով, երբ տեսան գեներալ Տէր-Ղուսկասովի զօրքի մօտենալը։ Թիւրք զօրաց գլխաւոր հրամանատարի կարգադրութեան միւս կէսը (հրացանի բռնել քիւրդերի առաջնորդներին), պէտք է կարծել, որ ոչ մի դէպքում և երբէք չէ կարող իրագործուելու։»

Ալաշկերտի սոսկալի կոտորածի մասին՝ նորմանը, որ ականատես է եղել, պատում է հետեւեալը։

«Թիւրք զօրքի մէջ կարգապահութեան խստութիւնը լիովին կախուած է հրամանատարի անձնական յատկութիւնից։ Այսպէս, օրինակ, Մուխտար փաշայի զօրաց մէջ եղել են միայն մի քանի առանձնակի կողովութի և մի հատ սպանութեան

դէպք: Այն խստութիւնն, որով Սուլստար փաշան պատժում էր սոյնպիսի քաջադրծութիւնները, չափաղանց սնախորժ էր թւում իսլամի անկանոն պաշտպաններին, այն է՝ չէրքեզներին և քիւրդերին, որոնք, քաջայայտ է, համարում էին անարդարութիւնը նրա Սուլստար փաշան կարգադրեց կախաղան հանել մի չէրքեզի, որ մեղադրուած էր մի հայ գիւղացու սպանութեան մէջ, կողոպտելու նպատակով, նորա հետիւն օրը թիւրք զօռ բաց շարքերից փախուստ տուին Կովկասի որդիներից աւելի քան հազար հոգի:

«Խամայիլ-Հակել փաշայի զօրքի մէջ, ընդհակառակը, հրոսակներն ու մարդասպանները մնում էին լիովին անպատճիւթ: Մանաւանդ գերազանցում էին այս դէպքում քիւրդերն, որոնց առանձին իմասմբով հովանաւորում էր Խամայիլ փաշան, որ ինքն էլ իսկական քիւրդ էր և խիստ համակրում էր իւր ցեղակիցների քաջադրծութիւններին»:

«Յունիսի 16 (28) գեներալ Տէր-Պուկասովի զօրքի վերադարձի ժամանակ Զէդէքեանից, Խամայիլ փաշայի անկանոն ձիւարոր զօրքը, փոխանակ ուուսաց զօրքի յետելց պնդելու, բաժանուեցին մանր խմբերի և ցրուեցին Ալաշկերտի դաշտավայրում ու սկսեցին քարուքանդ անել այն տեղ եղած գիւղերը և աւագ էր որ աւելի քան 3000 հայեր կարողացան ժամանակին մտնել ուսւս զօրքի պաշտպանութեան տակ և անվնաս հասնել ուսւս պետութեան սահմանները: Ապա թէ ոչ՝ բրդերն, հարգէ՛ նորանց էլ չէին խնայիլ»:

«Այն քրիստոնեանները, որոնք անզգուշաւթիւնից չետևեցին սորանց օրինակին, շատ գիւղերում զլխովին ենթարկուեցին կոտորածի, Խւչքիսում մի քանի հայեր փակուեցին եկեղեցու մէջ, յուսալով փրկուել հալածողներից: Բայց բրդերը որոնելով՝ դտան նորանց այնտեղ և կոտորեցին ամենաանխիղն կերպով: Ալաշկերտի դաշտավայրի ամրող տարածութեան վերայ քիւրդերը մորթում էին, յափշտակում էին, հրոյ ճարակ էին տալի, բռնարարում էին կանանց և երեխանց, կործանում էին տներ, կտրատում էին պտղաւոր այգիներ և խաղողի այգիներ, սպանում էին անասուններ, եթէ անյարմար էին համարում քշել նորանց իւրեանց հետաւ:

«Հարց գիւղում, քիւրդերի մի փոքրիկ խմբի առաջնորդ՝ Միրզա բէգը, մտաւ մի հայ քահանայի տուն, ուր բնակուում էին նորա ծերունի հայեր և մի օրիորդ, որ քահանայի (գուցէ

եղել է տիրացու և ոչ քահանայ. Քաջը.) Հարսնացուն էր և պատրաստում էր պատկուելու քահանայի հետ: Միողա բէկը հրամայեց թոկերով կապել միասին ծերունուն և նորա որդուն և կանգնեցրեց նորանց ականատես լինելու այն զազիր տեսարանին, թէ ինչպէս ինքը բռնաբարում է ողորմելի աղջկան: Սորանից յետոյ էլ՝ հրամայեց մորթել երեքին էր:

Վանի սանջակում Խսմայիլ փաշայի ցեղակիցները կատարում էին նոյն գազանութիւնները: Սակայն նոքա այն տեղ գիւղացիներին համեմատաբար սակաւ էին սոլանում: Առաւելապէս քշում էին նորանց ստրկութեան: Աւգուզիլի գիւղում քիւրդերը ներս խուժեցին եկեղեցու մէջ, ուր հայերը փակել էին իւրեանց կանանց և երեխանց, բռնաբարեցին ամենին առաջինից մինչև վերջինը, կատարելապէս մերկացրին նորանց, բայց թողին կենդանի: Այսպէս վարուեցին նորանք նաև այլ շատ գիւղերում:»

«Ձայիլմում, շէյլ Ձալլալէդդինը մի խումբ քիւրդերի հետ կողոպտեց հայերին մինչև վերջին թելն և տպա զործագրեց նորանց՝ իրբև քեռնակիր անասունների, կրել դէպի լեռները հէնց նորանցից յափշտակած գոյքը: Աղջկերանց և տղայ երեխաներին քրդերը պահեցին իւրեանց մօտ ստրկութեան:»

«Համարեա ամենուրէք՝ հայոց գիւղերում նոքա բռնաբարում էին կանանց և տանում էին իւրեանց հետ դէպի լեռները աղջիկներին:»

«Մըրբապղծութիւնը քիւրդերը համարում էին իրբև պարտաւորութիւն իւրեանց համար: Եկեղեցիներում նորանք հոյ ճարակ էին տալի սուրբ գրքերը և պատկերները, անարգում էին սուրբ հաղորդութեան նշխարը:»

«Վանքերում նորանք փորում էին նախկին վանահայրերի շիրիմները և չտունելով նորանց մէջ ցանկացած թանկագին իրեղէններ, ապականում էին շիրիմները: Սուրբ Բարդուղիմէսոսի վանքը լիովին քարուքանդ եղաւ Ալի-խանի ձիաւոր խմբի ձեռքով, որ գտաւ այդ տեղ հարուստ աւար: Վանքում պատսպարուած կանանց և երեխանց հետ նորանք վարուեցին վերոյիշեալ սովորութեամբ: Ապա տարան իւրեանց հետ սողջերանց և տղայ երեխաներին: Մի քահանա, որ փորձեց պաշտպանել իւր աղջկան, տեղնուտեղը մորթեցին:»

«Վանքը քանդեցին մինչև հիմքն և նորան հիմնաբարկող սուրբ Բարդուղիմէսոսի գերեզմանը փորեցին, նորա միջի ոս-

կրները ցանուցիր արին, իսկ գերեզմանը ապականեցին:

«Դուժայ գիւղում՝ քրդերի մի խումբ՝ շարագործ պղծութիւնների շարքում բւնաբարեց քահանայի կնոջն իւր ամուսնու աչքի առաջն իսկ թշուառ. կինն, որի վերայ հերթով զործագորում էր խմբի հւրաբանչիւր անդամ իւր անասնային կիրքը, մեռաւ իւր տանջողների գրկում, որոնք անխղճաբար այլանդակելով քահանային՝ թողին որ արիւնքամ լինի և չաշխատեցին գոնէ վերջնականապէս մորթել նորան:

Այս սոսկալի դէպքերը կատարւում էին հրամանատար քիւրդ Խսմայիլ-Հակըի փաշայի գիտութեամբ և թոյլտութեամբ, որ մի բոսէ անդամ չէր խղճանարւում յիշեալ զազրալի տեսաբաններով՝ իրքն զազանաբարոյ մարդ՝ և, իրքն հետաքրքրական կէտ, շարունակում է Նորմանը, որ քիւրդ Խսմայիլ փաշան Մուխտար փաշային ուղարկած զեկուցումների մէջ աշխատում էր այս զազանութիւնները ձգել ուսւ զինուորների վերայ, որոնք կազմում էին Տէր Պուկասովի յետնորդ զօրաբաժնը (արիւրգարդ):

Այսուհետեւ, իւր զեկուցումների մէջ, այդ անխիղճ, զազան մարդը, քիւր Խսմայիլ փաշան, հաւատացնելիս է եղել իւր իշխանութեանը, թէ ինչպէս ինքը հալածել է իրքն թէ գեներալ Տէր-Պուկասովին Դիադինից դէպի Խոգիիր «Ռուս զօրքի մնծամասնութիւնը ջնջուած՝ ոչնչացուած է իմ քաջ քիւրդերով: Ամբողջ ճանապարհը ծանկուած էր ուսւ զինուորների դիակներով՝ որոնց գարշահոտութիւնից ես իմ զիշաւոր ուժով չկարողացայ գնալ փախչող թշնամու ետևից»¹⁾

Այսպիսի ստայօդ խօսքերով է զարդարել Խսմայիլ փաշան իւր զեկուցումները և մի քանի դիակներ, որ տեսել են այդ փաշայի բանակում եղած անզլիացիք, եղել են ուսւ զինուորների թաղած մարմիններն, որոնց փորել հանել են զերեզմաններից նոյն իսկ Խսմայիլ փաշայի քաջ քիւրդերը ուսւաց՝ Զէդէքիանից նահանջ տալուց յետոյ: Եթէ այդ քաջ քիւրդերն էին հալածում Տէր Պուկասովին, հապա ուր էին Ալաշկերտի դաշտը հայոց անմեղ մանուկների վարդագոյն արիւնով ողողները...

Հաւանօրէն պէտք է ենթադրել, որ Նորմանը իւր անզլիերէն գրքի մէջ²⁾ աւելի դէպքեր բերած կինի հայերի

¹⁾ «Русская Правда» № 21 отъ 21 октября 1878.

²⁾ «Armenia and the Campaign of 1877». By C. B. Norman. London. 1878.

վերայ կատարած գաղանութիւնների մասին, բայց վերոյիշեալ ոռւս լրադիրը, որից ես քաղել եմ, արտագրել է միմիայն այսքան, աւելի խօսելով այն կէտերի մասին, որոնք կվերաբերուէին անմիջապէս ոռւսներին:

Նորմանի վկայութիւններին հարկաւոր է վստահութեամբ հաւատալ՝ նախ, որ իրեւ «Թայմզի» յատուկ թղթակից՝ գըտնւում էր, իւր ասելով, անզլիական կառավարութեան ազէնտ Առնօլդ Քէմբելի թիկնապահների շարքում և անցքերին ականատես էր, երկրորդ՝ Տրապիզոնում ոտքը ջրից ցամաք դնելով և երբէք Թիւրքիայում չիղած նա իւրեան համարում էր անկեղծ և ջերմ թրքասէր, և վճռել էր ամենայն ազնւութեամբ նկարագրել ինչ որ ինքը կտեսնէր, համոզուած լինելով որ սորանով օգուտ բերած կլինի «Թիւրքական գործինու» նա առաջին անդամ գալիս էր այստեղ Հնդկաստանից, ուր նա երկար տարիներ, իրեւ թղթակից, ուսումնասիրած էր:

Զերմաշերմ հաւատ ունենալով Թիւրքիայի վերայ՝ Նորմանը հաւաստիացնում է թէ՝ «Ն ունէի հասկացողութիւն արեւելան մնասակիրութեան և անառակութեան մասին այն օրինակներից», որոնց հանդիպել եմ Վիկտորիայ թագուհի կայսրունու արևելեան (Պարսկաստանի) հպատակների բարձրագոյն դաստկարգերի մէջ: Ուսումնասիրելով մի քանի տարիների ընթացքում արևելեան ազգերի բարքերն, ևս կարծում էի թէ նորանց հետ արդէն բաւականաշափ ծանօթ եմ: Այս էջերը կարող են տպացոյց համարուել, թէ որքան արմատական կերպով փոխուել է հայեացքս: Ամենակարճ միջոցում ես համոզուեցի, որ կատարելապէս անկարելի է մարդկային լեզուին յատուկ բառերով տալ շաղափար ասիական Թիւրքիայի վարչական չարագործութիւն երի մասին, ուր որպէս քրիստոնեաները, նոյնպէս և մուսուլմանները, հաւասարապէս տանջւում են թուրքական կառավարիչների լծի տակ: Ես տեսայ, որ հնդկական ամենապիշտ ուշան, թիւրք փաշաների մեծամասնութեան համեմատաւթեամբ կարող է անմեղութեան աիպար հանդիսաբար:

Այնուհետև շարունակում է Նորմանը. «Ճիշտարւում է նկարագրել այդ բռնակալների անսահման սանձարձակութիւնը, անզուսով կիրքը և աներեսակայելի ու վրդավեցուցիչ մեղոագործութիւնը: Այս պատերազմում Օսմանեան վարչութիւնը փայլեց ամենաստորին յանցանքներով, որպիսին երբեկցէ նա կա-

բող էր գործել, նա զրահաւորեց սրիկաներին և հրօսակներին կանխօրէն գիտենալով որ դորա հետեւանքը կոտորած պէտք է լինէր Բոլգարիայում և Հայաստանում: Անձամբ ծանօթանալով իրերի դրութեանը Թուրքիայում, ես հարկադրուած էի հրաժարուել եմ բոլոր թիւրքամիրական ցնորքներից և այժմ պատրաստ եմ ձայնակցել Ֆրիմանին, թէ «Անգլիայի համար առաւել լաւ է կորցնել արևմտեան հնդկական կալուածները, քան թոյլ տալ իւր զաւակներից որ և է մէկին ձեռք բարձրացնել թիւրք վարչութեան պաշտպանութեան համար»¹⁾)

Միթէ կարելի է ուրեմն չհաւատալ այսպիսի խօսքերի հեղինակին:

Վերջին պատերազմի ժամանակ Թիւրքահայ ժողովրդի կրած աղէտների այս փոքրիկ նկարտգրութիւնը, որ ես կարողացայ ձեռք բերել, կազմում է լայնատարած ովկիանոսի մի այն մի կաթիլը: Այս նոր բան չէ, այլ հայոց ազգի պատմութեան անընդհատ շարունակութիւնն է և նորից ապացուցանում է այդ ազգի պատմական հերոսութիւնը, որ նա իւր սուրբ կրօնն ու մայրենի լեզուն պահպանելու նպատակով պատրաստ է ոչ միայն աղէտներ կրելու, այլ և զոհ բերելու տիեզերքի միջ ամենաթանկագինը—իւր կեանքը:

1) «Русская Правда» № 21 1878»